

«2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ V ՓՈՒԼ

«2020թ. ՀՀ լավագույն հաշվապահ» անվանակարգում հայտարարված մրցույթի 11-րդ պարբերաշրջանի 5-րդ ընտրական փուլին ներկայացվում է մեկ հարցաշար և մեկ խնդիր: Հարցաշարը բաղկացած է 10 հարցից: Հարցաշարի ճիշտ պատասխանները գնահատվում են 2-ական միավոր, սխալ պատասխանները՝ 0 միավոր: Հարցաշարի առավելագույն միավորը կազմում է 20 միավոր: Խնդիրը բաղկացած է 1 հարցից: Հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 10 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր:

Հարցաշարի և խնդրի ընդհանուր միավորների առավելագույն թիվը կազմում է 30 միավոր: Հինգերորդ փուլին ներկայացված հարցաշարից և խնդրից առավել բարձր միավոր հավաքած մասնակիցների անունը, ազգանունը, միավորների թիվը (աճման կարգով) կտպագրվի ամսագրի հաջորդ համարներում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակիցը դառնա հաղթողի որոշման գործընթացին:

Հինգերորդ փուլի առաջադրանքների պատասխաններն ուղարկել press@gortsq.am էլեկտրոնային հասցեին մինչև 2020թ. նոյեմբերի 30-ը: Առաջադրանքների ճիշտ պատասխանները կտեղադրվեն www.gortsq.am կայքէջում՝ 2020թ. դեկտեմբերի 1-ին:

ՈՒՇԱՂՈՒԹՅՈՒՆ – Մրցանակաբաշխությունը, պատվոգիրը, հաշվապահական հաշվառման միջազգային խորհրդանիշով ոսկեզր շքանշանը, անակնկալ հուշանվերը և վկայական հանձնելու արարողությունը տեղի կունենա 2021 թվականի փետրվարին՝ Ծաղկաձորում:

«2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ V ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԸ

Հարց 1. 2020թ.-ին ձեռքբերված արտադրական սարքավորման մաշվածությունը ծախսագրվում է՝

ա) ընթացիկ հարկային տարվա ընթացքում.

բ) մեկ տարվա ընթացքում.

գ) հինգ տարվա ընթացքում.

դ) ութ տարվա ընթացքում:

Հարց 2. Պետական 100 տոկոս բաժնետնասնակցությամբ ՓԲԸ-ի կողմից ստացվող շահաբաժիններ հարկվում են՝

ա) 5 տոկոսով.

բ) 10 տոկոսով.

գ) չեն հարկվում.

դ) հարկվում են հիմնադրի որոշմամբ:

Հարց 3. Ոչ ռեզիդենտ ԱԶ-ին բեռնափառխաղման համար հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտները հարկվում են՝

ա) 5 տոկոսով.

բ) 23 տոկոսով.

գ) 20 տոկոսով.

դ) հարկման ենթակա չէ:

Հարց 4. Արտերկրյա ստորաբաժանումը՝

ա) հաշվետու կազմակերպության դուստր կազմակերպությունն է, ասոցիացված կազմակերպությունը, համատեղ կազմակերպությունը կամ մասնաձյուղն է, որի գործարքների մեծ մասը կազմում են արտարժույթով արտահայտված գործարքները.

բ) հաշվետու կազմակերպության դուստր կազմակերպությունն է, ասոցիացված կազմակերպությունը, համատեղ կազմակերպությունը կամ մասնաձյուղն է, որը իրավաբանորեն գրանցված է մեկ այլ երկրում.

գ) հաշվետու կազմակերպության դուստր կազմակերպությունն է, ասոցիացված կազմակերպությունը, համատեղ կազմակերպությունը կամ մասնաձյուղն է, որոնց գործունեությունը հիմնված է կամ ծավալվում է հաշվետու կազմակերպության երկրից դուրս՝ մեկ այլ երկրում.

դ) հաշվետու կազմակերպության դուստր կազմակերպությունն է, ասոցիացված կազմակերպությունը, համատեղ կազմակերպությունը կամ մասնաձյուղն է, որի գործունեությունը հաշվետու կազմակերպության գործունեության անբաժան մասը չէ.

Հարց 5. Շնորհների հետ վերադարձումը կատարվում է՝

ա) առաջին հերթին՝ տվյալ շնորհի հետ կապված չմարված հետաձգված (դեռևս եկամուտ չձանաչված) կրեդիտային մնացորդի հաշվին, իսկ այդ մնացորդը գերազանցող մասով վերադարձումը դիտվում է որպես եկամտի ճշգրտում.

բ) առաջին հերթին՝ ճանաչվում է որպես ծախս, իսկ չմարված հետաձգված (դեռևս եկամուտ չճանաչված) մնացորդը գերազանցող մասով վերադարձումը կատարվում է այդ մնացորդի հաշվին.

գ) առաջին հերթին՝ տվյալ շնորհի հետ կապված չմարված հետաձգված (դեռևս եկամուտ չճանաչված) կրեդիտային մնացորդի հաշվին, իսկ այդ մնացորդը գերազանցող մասով վերադարձումը դիտվում է որպես ակտիվ.

դ) առաջին հերթին՝ տվյալ շնորհի հետ կապված չմարված հետաձգված (դեռևս եկամուտ չճանաչված) կրեդիտային մնացորդի հաշվին, իսկ այդ մնացորդը գերազանցող մասով վերադարձումը դիտվում է որպես ծախս:

Հարց 6. Ակտուարային ենթադրությունները իրենցից ներկայացնում են այն փոփոխականների լավագույն գնահատականը, որոնք որոշելու են՝

ա) աշխատակցի կողմից կազմակերպությանը ծառայությունների մատուցման ողջ ընթացքում այդ ծառայությունների մատուցումից տնտեսական օգուտների այն ներհոսքերը, որոնք ուղղակիորեն վերագրվում են կազմակերպությանը եկամուտ բերող հիմնական գործունեությանը.

բ) աշխատակցի կողմից կազմակերպությանը ծառայությունների մատուցման ողջ ընթացքում այդ ծառայությունների մատուցումից տնտեսական օգուտների այն ներհոսքերը, որոնք ուղղակիորեն վերագրվում են կազմակերպության գործառնական գործունեությանը.

գ) աշխատակիցներին հատուցումներ տրամադրելու վերջնական ծախսումները.

դ) աշխատակցի կողմից կազմակերպությանը ծառայությունների մատուցման ողջ ընթացքում այդ ծառայությունների մատուցումից տնտեսական օգուտների ներհոսքը:

Հարց 7. Նշված ակտիվներից որը չի համարվի հիմնական միջոց՝

ա) ոչ գործառնական գործունեության ժամանակ օգտագործվող համակարգիչը.

բ) գործառնական գործունեության ժամանակ օգտագործվող համակարգիչը.

գ) արտասովոր դեպքերի հետևանքների վերացման համար օգտագործվող սարքավորումը.

դ) բոլոր նշվածներն էլ կհամարվեն հիմնական միջոց:

Հարց 8. Էլեկտրաէներգիա մատակարարող կազմակերպությունն»-ի կողմից առաքված էլեկտրաէներգիայի դիմաց պարտքի մարում`

ա) Ղեբետ 252

Կրեդիտ 221 .

բ) Ղեբետ 252

Կրեդիտ 611.

գ) Ղեբետ 221

Կրեդիտ 611:

Հարց 9. Արտացույվում է շահութահարկի հաշվարկման նպատակներով դեբիտորական պարտքի դուրս գրումը`

ա) Ղեբետ 714

Կրեդիտ 221.

բ) Ղեբետ 331

Կրեդիտ 221.

գ) Ղեբետ 941 :

Հարց 10. Բաժնետերերից հետզնված սեփական բաժնետոմսերի շրջանառությունից դուրս հանելու արտացույվում`

ա) Ղեբետ 311

Կրեդիտ 312.

բ) Ղեբետ 313

Կրեդիտ 252.

գ) Ղեբետ 311

Կրեդիտ 313

**«2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ԼԱԿԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԻ
ԸՆՏՐԱԿԱՆ V ՓՈՒԼԻ ԽՆԴԻՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԸ**

Կազմակերպությունը ստեղծվել է 2019թ.-ին և ստեղծման օրվանից աշխատել է հարկման ընդհանուր համակարգում:

1. 2020թ. սեպտեմբերի 20-ին ներմուծել է սարքավորումներ, որի մաքսային արժեքը կազմել է 13750 հազ. ՀՀ դրամ, սակայն ԱԱՀ-ն վճարվել է 01.10.2020թ.-ին և ապրանքը բաց է թողնվել 02.10.2020թ.-ին.
2. ԵՏՍ Երկրից 10.09.2020թ.-ին ձեռք է բերել սարքավորում, որի մասով տեղակայումը կատարվել է հոկտեմբերի 15-ին՝ 15 000 ռուբլի արժեքով, տվյալ գործարքի մասով նույն օրը դուրս է գրվել մատակարարի անունից հաշիվ: Տվյալ գործարքի մասով մատակարարը հանդիսացել է ՌԴ ռեզիդենտ, որը հաստատվել է ռեզիդենտության վերաբերյալ տեղեկանքով.
3. ՀՀ-ում օգոստոս ամսվա ընթացքում հարկային հաշվով ստացված 100 000 հազ (առանց ԱԱՀ) ՀՀ դրամի ապրանքների 20 տոկոսի մասով սեպտեմբերի 8-ին կատարվել է հաշվի ճշգրտում նվազեցումով.
4. օգոստոսին իրացված ապրանքի մասով առաջացել են որոշակի տեխնիկական խնդիրներ, որը կողմերի միջև կնքված պայմանագրով սահմանված երաշխիքի համաձայն՝ ժամկետի մեջ է եղել: Որոշում է կայացվել սարքավորումը փոխարինել ավելի հզոր տարբերակով, որի արժեքը կազմել է 80 000 (առանց ԱԱՀ) հազ ՀՀ դրամ: Նախկինում օտագործվող սարքավորման արժեքը եղել 70 000 (առանց ԱԱՀ), քանի որ փոխարինման նախաձեռնությունը եղել է վաճառողինը, գնորդը հաշիվ չի գրել.
5. նույն հաշվետու ժամանակահատվածում տարբեր գնորդներից գնվել է 75 000 հազ. (առանց ԱԱՀ) դրամ ապրանքներ, որի 25 տոկոսն է եղել ԱԱՀ-ով հարկվող ապրանքներ:

Որոշել սեպտեմբեր ամսվա վճարման/փոխհատուցման ենթակա ԱԱՀ գումարը:

**«2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ԼԱԿԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԻ
ԸՆՏՐԱԿԱՆ V ՓՈՒԼԻ ԽՆԴԻՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԸ**

Կազմակերպությունը ստեղծվել է 2019թ.-ին և ստեղծման օրվանից աշխատել է հարկման ընդհանուր համակարգում:

1. 2020թ. սեպտեմբերի 20-ին ներմուծել է սարքավորումներ, որի մաքսային արժեքը կազմել է 13750 հազ. ՀՀ դրամ, սակայն ԱԱՀ-ն վճարվել է 01.10.2020թ.-ին և ապրանքը բաց է թողնվել 02.10.2020թ.-ին.
2. ԵՏՍ Երկրից 10.09.2020թ.-ին ձեռք է բերել սարքավորում, որի մասով տեղակայումը կատարվել է հոկտեմբերի 15-ին՝ 15 000 ռուբլի արժեքով, տվյալ գործարքի մասով նույն օրը դուրս է գրվել

մատակարարի անունից հաշիվ: Տվյալ գործարքի մասվ մատակարարը հանդիսացել է ՌԴ ռեզիդենտ, որը հաստատվել է ռեզիդենտության վերաբերյալ տեղեկանքով.

3. ՀՀ-ում օգոստոս ամսվա ընթացքում հարկային հաշվով ստացված 100 000 հազ (առանց ԱԱՀ) ՀՀ դրամի ապրանքների 20 տոկոսի մասով սեպտեմբերի 8-ին կատարվել է հաշվի ճշգրտում՝ նվազեցումով.
4. օգոստոսին իրացված ապրանքի մասով առաջացել են որոշակի տեխնիկական խնդիրներ, որը կողմերի միջև կնքված պայմանագրով սահմանված երաշխիքի համաձայն՝ ժամկետի մեջ է եղել: Որոշում է կայացվել սարքավորումը փոխարինել ավելի հզոր տարբերակով, որի արժեքը կազմել է 80 000 (առանց ԱԱՀ) հազ ՀՀ դրամ: Նախկինում օտագործվող սարքավորման արժեքը եղել 70 000 (առանց ԱԱՀ), քանի որ փոխարինման նախաձեռնությունը եղել է վաճառողինը, գնորդը հաշիվ չի գրել.
5. նույն հաշվետու ժամանակահատվածում տարբեր գնորդներից գնվել է 75 000 հազ. (առանց ԱԱՀ) դրամ ապրանքներ, որի 25 տոկոսն է եղել ԱԱՀ-ով հարկվող ապրանքներ:

Որոշել սեպտեմբեր ամսվա վճարման/փոխհատուցման ենթակա ԱԱՀ գումարը:

		դեբետ	կրեդիտ
ներմուծում		0	
ԵՏՄ		0	
ճշգրտում		20000*20%=-4000	
երաշխիք			80000*80%*20%=12800
գնումներ		75000*25%*20%=3750	
<i>Եպտեմբեր ամսվա վճարման ենթակա ԱԱՀ գումար</i>			12800-3750+4000=13050